

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ
ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Գործարարության կայացման ու զարգացման մակարդակից է կախված երկրի տնտեսական և սոցիալական վիճակը:

Գործարարության ձևավորման ու ծավալման ուղղությամբ հանրապետությունում կատարվել են որոշակի քայլեր, որոնց արդյունքում տեղի է ունեցել պետական ձեռնարկությունների մասնավորեցում, իսկ դրան հաջորդող ժամանակաշրջանում բավական լուրջ քայլեր են կատարվել ներտնտեսական հարաբերությունների ազատականացման և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության բնագավառում:

Այս գործընթացի արդյունքում ազատություն տրվեց տնտեսական գործունեության տարբեր բնագավառների, որը կարևոր է ինչպես ձեռնարկատիրոջ, գործարարի, այնպես էլ սպառողի համար: Գործնականում նման ազատությունը նշանակում է յուրաքանչյուր քաղաքացու իրավունքի ազատություն՝ սկսելու կամ դադարեցնելու իր գործը, ձեռք բերելու ցանկացած չարգելված ռեսուրս, որի համար կարող է վճարել օգտագործել ցանկացած տեխնոլոգիա, արտադրել ցանկացած արտադրանք և առաջարկել այն վաճառքի շահութաբեր գնով՝ միևնույն ժամանակ տնօրինելով իր ֆինանսական միջոցները սեփական հայեցողությամբ: Փաստորեն այս հարաբերությունների ձևավորման ու հետագայում դրա կայացման գործում հանրապետությունում կարևոր դեր խաղաց մասնավորեցումը:

Մասնավորեցումը, լինելով սոցիալ-տնտեսական միջոցառում, նաև տնտեսության ռացիոնալ կառուցվածքի ձևավորման, գործունեության արդյունավետության բարձրացման, նյութական ու ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջոց է, որոնց արդյունքում խթանվում է մրցակցությունը, նվազեցվում է պետական վարչակազմի ազդեցությունը ձեռնարկատիրական գործունեության կառավարման բնագավառում և այլն:

Դեռևս 1991 թվականի մարտին ընդունվեց առևտրի, հանրային սննդի, վճարովի ծառայությունների և անավարտ շինարարության փոքր օբյեկտների սեփականաշնորհման մասին ՀՀ կառավարության որոշումը, և 1991-1992 թվականներին սեփականաշնորհվեցին այդ ոլորտների 335 օբյեկտներ: 1995-1997 թվականներին նույնպես առավել արագ ընթացավ «փոքր» օբյեկտների, հիմնականում առևտրի և սպասարկումների ոլորտի մասնավորեցումը, իսկ միջին և խոշոր ընկերությունների զանգվածային մասնավորեցումը սկսվեց 1995 թվականից և շարունակվում է առ այսօր:

Եվ դա արդարացված ու բնական երևույթ է, քանի որ փոքր ու միջին ձեռնարկությունները ապացուցել են իրենց կենսունակությունը: Բավական է նշել, որ ՓՄՁ-ներում զբաղված է աշխարհի բնակչության ավելի քան կեսը, և հենց նրանք են ապահովում համախառն ներքին արդյունքի զգալի մասը: ԱՄՆ-ում շուկայական տնտեսությունը ձեռք է բերել ավելի կայուն տեսք, քանի որ այստեղ շարունակաբար ավելանում է ՓՄՁ-ի քանակը, որոնք էլ հենց ՀՆԱ-ի ավելացման պատճառն են:

Զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում փոքր ու միջին ձեռնարկությունները կազմում են տնտեսավարող սուբյեկտների ընդհանուր թվաքանակի 97-99%-ը:

ԱՄՆ-ում այդ ցուցանիշը կազմում է 99.7%¹ և ապահովում է ՀՆԱ-ի 52%-ը, իսկ աշխատողների զբաղվածության մեջ 53%-ը:

Ներկայումս ՀՀ-ում «ՓՄՁ-ի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով ՓՄՁ-ի սահմանման որպես ընդհանուր չափանիշ հիմք է ընդունվում աշխատողների թվաքանակը²: Ելնելով վերոնշյալ չափանիշներից՝ կառավարության կողմից իրականացվում է մասն աշխատողների և կոոպերատիվների նկատմամբ աջակցության քաղաքականություն, որն էլ իր դրսևորումն է ունենում տարբեր ծրագրերում:

Սակայն պետք է փաստել, որ չնայած այն հանգամանքին, որ «ՓՄՁ-ի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով ՓՄՁ-ների սահմանումը կատարվում է՝ ելնելով աշխատողների միջին ցուցակային թվաքանակից, այդուհանդերձ, հարկային օրենսդրությամբ այդ չափանիշները տարբեր են: Բանն այն է, որ «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքով պարզեցված հարկ վճարողներ կարող են համարվել այն անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցվող ծառայությունների իրացման շրջանառության ընդհանուր գումարը չի գերազանցում 50 մլն դրամը³: Դա նշանակում է, որ տարբեր դեպքերում կիրառվում են տարբեր մոտեցումներ, որը արդարացված ու արդյունավետ համարել չի կարելի, քանի որ պետք է ընդունվեն միասնական համակարգեր ու չափորոշիչներ:

Հայաստանում ՓՄՁ-ի սուբյեկտները 2006թ. տվյալների համաձայն հիմնականում գործում են առևտրի, շինարարության, կապի ծառայությունների, տրանսպորտի և արդյունաբերության ոլորտներում:

Ինչպես ձեռնարկատիրական գործունեությանը, այնպես էլ փոքր ու միջին ձեռնարկություններին բնորոշ են տարածաշրջանային զարգացման մույն հիմնախնդիրները: Այսպես, 2005թ. տվյալներով ՓՄՁ-ի 48.5%-ը կամ տնտեսավարող սուբյեկտներից 45529-ը կենտրոնացված է Երևանում, իսկ մնացած 51.5%-ը կամ տնտեսավարող սուբյեկտների 48345-ը՝ հանրապետության մնացած մարզերում⁴: Նման վիճակագրական տվյալներից կարելի է եզրակացնել, որ գործարար ակտիվության տեսանկյունից Երևանում և մարզերում գոյություն ունի խիստ անհավասարաչափ տեղաբաշխում:

Այս ամենից հետևում է, որ տնտեսական, սոցիալական միջավայրի ձևավորումը ՓՄՁ-ի համար մարզերում կարևոր նախապայման է, և բացի այդ հրատապ են գործարարության զարգացման հիմնախնդիրները մարզերում: Այսինքն, անհրաժեշտ է պայմաններ ստեղծել այն քաղաքներում, մարզերում և համայնքներում, որոնցում ներկայումս գործարարությունը թույլ է զարգացած:

Բնականաբար, նշված հիմնախնդիրները անշուշտ ոչ բարենպաստ հետևանք են ունենում հասարակության զբաղվածության վրա: Չնայած պաշտոնական տվյալների համաձայն՝ գործազրկությունը 2006թ. սկզբին կազմել է 8.1%, նախորդ տարվա 9.6%-ի փոխարեն, այնուամենայնիվ, համաձայն փորձագիտական տվյալների, այս ցուցանիշը էականորեն բարձր է և կազմում է 30-40%: Այն դեպքում, երբ աշխատողների համարյա 1/3-ը զբաղված է ՓՄՁ-ում:

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում հայաստանյան փոքր ու միջին ձեռնարկությունները կարիք են զգում պետական աջակցության: Դժբախտաբար գործարարության զարգացման համար դեռևս արդյունավետ համակարգեր չեն մշակվել: Ընդունված ծրագրերը, օրենքները հիմնականում ձևական բնույթ են կրում, իսկ այն ֆինանսական աջակցությունը, որը ներկայումս ցուցաբերվում է ՓՄՁ-ին, դեռևս բավարար համարել չի կարելի:

¹ Small Business in Japan "White paper on small and medium enterprises in Japan" MITI, 2002, p. 109, 219:

² «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, հոդված 2:

³ «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենք» Հայաստանի Հանրապետության հարկային օրենքները, Եր.,

«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, 2005, էջ 169:

⁴ Տեղեկատվություն «Փոքր ու միջին ձեռնարկությունների գործունեության բնագավառը Հայաստանում», Երևան, 2005, էջ 37:

Ներկայումս փոքր ձեռնարկությունները կարևոր դերակատարում ունեն ծառայությունների ոլորտում, որը ներառում է նաև տեխնիկական ծառայությունները՝ ներառյալ մեքենաների, սարքավորումների վերանորոգումը, խորհրդատվական ծառայությունները և այլն:

Այդուհանդերձ, չնայած ոլորտում առկա հիմնախնդիրներին, պետք է փաստել, որ տարեց-տարի նկատվում ու արձանագրվում է ՓՄՁ-ի ոլորտը բնութագրող ցուցանիշների դինամիկ աճ:

Այսպես, 2006 թվականին ՓՄՁ-ի տեսակարար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքում կազմել է 40.3% 2005 թվականի 39.8%-ի փոխարեն: Հատկանշական է, որ 2006 թվականի ՀՆԱ-ում ՓՄՁ տեսակարար կշռի կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին են ունեցել փոքր կազմակերպությունները՝ 17.6%, գերփոքրի՝ 11.3%-ի և միջինի՝ 11.4%-ի դիմաց: Նշանակալի է ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը նոր աշխատատեղերի ստեղծման գործում: 2006 թվականի ընթացքում ստեղծված ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը կազմել է ավելի քան 10 հազար, որի արդյունքում ստեղծվել է շուրջ 14.5 հազար նոր աշխատատեղ: 2006 թվականի ընթացքում նոր ՓՄՁ սուբյեկտների ստեղծման, ինչպես նաև գործող ՓՄՁ սուբյեկտների գործունեության ընդլայնման արդյունքում ստեղծված նոր աշխատատեղերի թիվը կազմել է 20.3 հազար, որից 50.2%-ը կամ 10.2 հազարը՝ ՀՀ մարզերում, իսկ 49.8%-ը կամ 10.1 հազարը՝ Երևանում: 2006 թվականին ավելացել է նաև ՓՄՁ մասնաբաժինը երկրի արտահանման ծավալում՝ կազմելով 16.9% 2005 թվականի 16.4%-ի և 2003 թվականի 14.3%-ի դիմաց¹:

Չնայած վերոնշյալ տնտեսական ցուցանիշների բարելավմանը՝ դրանք բավարար համարել չի կարելի: Այդ է պատճառը, որ ներկայումս մեր հանրապետությունում իրականացվող բարեփոխումները, որը նախ նպատակաուղղված է մենաշնորհների դեմ պայքարին, ինչպես նաև դրանով տնտեսության արդյունավետության բարձրացմանը, ՓՄՁ-ի զարգացման հիմնական ուղղություններից են:

Տնտեսության այս հատվածը անհրաժեշտ միջավայր է ձևավորում մրցակցության համար, որը պատրաստ է արագ արձագանքել շուկայում իրականացվող ցանկացած փոփոխության:

Իրական կյանքում հստակ կարգավորման համակարգի բացակայությունը ՓՄՁ-ների համար, որը դրսևորվում է վարկերի ներգրավման, նյութական ռեսուրսների աջակցության բնագավառում, այս ձեռնարկություններին դրել է ծանր վիճակում՝ անհավասար մրցակցային դաշտի մեջ գցելով խոշոր կազմակերպությունների հետ:

¹ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջ: